Doi: 10.56737/2953-7843-2025.08-109

ՔՆԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔ–ՍՓՅՈՒՌՔ ԸՆԿԵՐԱՅԻՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (1988–1991 ԹԹ.)[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միության փլուզումը եւ 1991 թ. Հայաստանի անկախության հռչակումը նոր իրողություններ առաջ բերեցին նորանկախ երկրի համար։ Փլուզվեցին խորհրդային ժամանակաշրջանում գործող ենթակառուցվածքները, որն առավել բարդացրեց հանրապետության ընկերային-տնտեսական կացությունը։ 1988 թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած Սպիտակի աղետալի երկրաշարժը, Արցախյան պայքարը, Հայաստանի շրջափակումը Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից, Ադրբեջանից 400 հազար փախստականների հոսքը Հայաստան երկրում ստեղծել էր բարդ իրավիճակ, որը պահանջում էր համատեղ գործունեություն, միասնություն եւ հետեւողական ծրագրային քաղաքականություն։

Այս պայմաններում էր, որ հայությունն ամենուր համախմբվեց հայրենի պետության շուրջը։ Այդ գործընթացում կարեւորագույն դեր ստանձնեց Հայ Առաքելական Եկեղեցին, որը հոգեւոր վերազարթոնքի պայմաններում հանդես եկավ հայությանը միավորելու, հայրենիքի շուրջ համախմբելու, հայապահպանության հայրենանվեր դերում։ Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական աթոռները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ սերտ գործակցությամբ կարեւոր դեր դեր ստանձնեցին երկրաշարժից տուժած հայրենիքին ցուցաբերվող աջակցությունը կազմակերպելու, համախմբելու, ուղղորդելու, աղետի գոտում վերաշինության ծրագրեր իրագործելու, Արցախյան գոյապայքարին սատարելու, փախստականներին օգնելու գործում։ Հատկապես ակնառու էր Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ի եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ.-ի

---

[1]* *Ստացվել է՝ 22.09.2025, գրախոսվել է՝ 22.10.2025։ Էլ. հասցե՝* k_narik@mail.ru:

սերտ գործակցությունը, որոնք մի շարք հանդիպումներով եւ հայրենի իշխանությունների հետ համաձայնեցված ծրագրերով մեծ աշխատանք տարան երկրաշարժի հետեւանքների վերացման, աղետի գոտու վերականգնման, Արցախյան պայքարին աջակցելու, հայրենիքի ընկերային-տնտեսական կացության բարելավմանն ուղղված ծրագրերի կենսագործման, հոգեւոր կյանքի վերելքի, ժողովրդի բարոյահոգեբանական վիճակը բարելավելու ուղղությամբ։

1988 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԵՒ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժ, որի հետեւանքով լրիվ կամ մասնակիորեն ավերվեցին Գյումրի, Սպիտակ, Վանաձոր եւ Ստեփանավան քաղաքները։ Այն ընդգրկեց հանրապետության տարածքի 40 տոկոսը 1 միլիոն 130 հազար բնակչությամբ[2]։ Պաշտոնական տվյալների համաձայն զոհվեց շուրջ 25 հազար մարդ, 530 հազար մարդ մնաց անօթեւան[3]։

Ավերման գոտին ընդգրկեց 3000 քառ. կմ տարածք, տուժեց 21 քաղաք, 342 գյուղ, ավերվեց ՀՀ ամբողջ բնակֆոնդի 17%-ը, դադարեցին գործել 170 արդյունաբերական ձեռնարկություն, մեծ վնաս հասցվեց գյուղերին եւ ագրոարդյունաբերական համալիրին, ինչպես նաեւ ճարտարապետական, պատմական, արվեստի հուշարձաններին[4]։ Տարերային աղետի հետեւանքով Հայաստանի ժողովրդական տնտեսությունը կրեց 13 միլիարդ ռուբլու վնաս[5]։

Երկրաշարժից անմիջապես հետո մեծ թափ առավ ԽՍՀՄ հանրապետությունների, աշխարհի բազմաթիվ երկրների, ինչպես նաեւ աշխարհասփյուռ հայության մարդասիրական օգնությունը, որն աննախադեպ էր իր ծավալներով եւ ընդգրկմամբ։ Խորհրդային Միության պատմության մեջ առաջին անգամ էր, որ արտերկրի պետական, հասարակական եւ բարեգործական կազմակերպությունների կողմից նման բնույթի

---

[2] *Տե՛ս Հայոց պատմություն, հտ.* IV, *գիրք* II, *Նորագույն ժամանակաշրջան (1945–1991), Երեւան, «Զանգակ» հրատ., 2016, էջ 179։*

[3] *Նույն տեղում։*

[4] *Տե՛ս* Թ. Աղանյան, *Երկրաշարժը վերապրածների սոցիալ-մշակութային ադապտացումը, Երեւան, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2018, էջ 18։*

[5] *Տե՛ս Հայոց պատմություն, հտ.* IV, *գիրք* II, *էջ 179։*

լայնածավալ նյութական եւ բարոյական աջակցություն էր ցուցաբերվում բնական աղետի ենթարկված որեւէ երկրի։

Երկրաշարժին հաջորդեց Խորհրդային Միության փլուզումը եւ Հայաստանի Հանրապետության անկախացումը, որն իր հերթին բերեց պետական, քաղաքական, տնտեսական կառավարման համակարգերի, հասարակական հարաբերությունների, մշակութային կյանքի արմատական վերափոխումների, որոնք ավելի բարդացրին երկրի վիճակը։

Հայ Առաքելական Եկեղեցին առաջիններից էր, որ գործնական քայլեր ձեռնարկեց աղետից տուժած բնակչությանն աջակցելու հարցում։ Դա արտահայտվեց ոչ միայն Եկեղեցու հասցեով ստացված նյութական օգնությունը աղետի գոտի ուղղորդելու, այլեւ աղետից տուժած բնակչությանը Եկեղեցու կողմից ընկերային-հոգեբանական աջակցություն ցուցաբերելու գործում։ Գիտակցելով խնդրի կարեւորությունը՝ Հայոց Եկեղեցին եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ն երկրաշարժի առաջին իսկ օրերից անհապաղ հստակ քայլեր ձեռնարկեցին այդ ուղղությամբ։ 1988 թ. դեկտեմբերի 9-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ն երկրաշարժի կապակցությամբ հանդես եկավ հեռուստատեսությամբ եւ առաջին հերթին սգակիր հայ ժողովրդին ուղղված ցավակցական եւ մխիթարիչ խոսք ասաց[6]։ Երկրաշարժի չորրորդ օրը՝ դեկտեմբերի 11-ին, Վազգեն Ա. Վեհափառն անձամբ այցելեց աղետի գոտի եւ իր ներկայությամբ ու աղետից տուժած բնակչությանն ուղղված խոսքով հոգեւոր-հոգեբանական մեծ ազդեցություն ունեցավ աղետից տուժած բնակչության վրա[7]։

1988 թ. դեկտեմբերի կեսերին Ամենայն Հայոց կաթողիկոսը աղետի գոտուն օգնության ձեռք մեկնելու կոչով դիմեց Հայկական սփյուռքին եւ միջազգային կազմակերպություններին։ Վազգեն Ա. կաթողիկոսի աշխարհասփյուռ հայությանն ուղղված կոչում ընդգծվում էր աղետի գոտու

---

[6] *Տես* Ս. Վանեցի, *Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի մատենագիտությունը, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1995, էջ 98։*

[7] *ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 111, թ. 4։ Տես նաեւ՝* Ք. Պետրոսյան, *«Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական Աթոռների եւ սփյուռքյան թեմերի աջակցությունը 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետեւանքները վերացնելու գործում», Հայոց Եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում, Գիտաժողովի նյութերի ժողովածու (10 սեպտեմբերի, 2024 թ.), Երեւան, «Լուսակն», 2025, էջ 206։ Տես նաեւ՝* Т. Аганян, Вклад Армянской Апостольской церкви в деле социально-культурной адаптации населения Зоны бедствия, с. 19–26, в. кн., The fundamentals of our spirituality, Proceedings of the VIII International Scientific conference, edit.Universali, Tbilisi, 2016, *էջ 23։*

բնակչությանը հասցվելիք օգնության հոգեբանական կարեւորության եւ աղետյալների ընկերային-մշակութային վերածնության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու մասին միտքը[8]։

Ամենայն Հայոց Հայրապետի կոչին միացավ նաեւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ.-ն[9]։ 1988 թ. դեկտեմբերի 15-ին ժամանելով հայրենիք՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ.-ն դեկտեմբերի 17-ին այցելեց ավերված Գյումրի եւ Սպիտակ քաղաքները, անձամբ տեսավ աղետի ծանր հետեւանքները եւ պետական գործիչների ու Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ի հետ անմիջապես խորհրդակցեց ավերված քաղաքների ու գյուղերի վերաշինման ծրագրերի շուրջ[10]։

1988 թ. դեկտեմբերի 19-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ն եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ.-ն ընդունեցին համայն հայությանն ուղղված համատեղ կոչ, որում հորդորում էին «մեկ սիրտ, մեկ կամք» դարձած, կազմակերպված ու ծրագրված ձեւով մասնակցել աղետյալ հայրենակիցների տառապանքն ամոքելու, նրանց հոգատար վերաբերմունքով մխիթարելու եւ ապա առատաբաշխ ձեռքերով նպաստելու կործանված քաղաքների եւ շենների վերակառուցման գործին[11]։ Փաստորեն առաջնային էր համարվում ոչ միայն համազգային հանգանակության իրագործումը եւ հանգանակված գումարների տրամադրումը նախօրոք ճշտված ու ծրագրված նպատակների համար, այլեւ ընկերային-հոգեբանական աջակցության ցուցաբերումը հայրենակիցներին։

Կաթողիկոսների կոչին հետեւեց աննախադեպ աջակցությունը։ Աղետից տուժածներին օգնելու նպատակով Հայաստան էին ուղարկվում

---

[8] Տե՛ս Թ. Աղանյան, Երկրաշարժը վերապրածների սոցիալ-մշակութային ադապտացումը, էջ 42։

[9] Հետագայում Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա. (1995–1999)։ 1983–1994 թթ. եղել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս։

[10] Տե՛ս Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ.-ն Մայր Աթոռում, «Էջմիածին» ամսագիր, թիվ 11–12, 1988, էջ 24–33։

[11] ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 102, թ. 4–6։ Տե՛ս նաեւ՝ Կոչ մեր ժողովուրդին, «Էջմիածին» ամսագիր, թիվ 11–12, , 1988, էջ 15–17։ Տե՛ս նաեւ՝ Կոչ մեր ժողովուրդին, «Հասկ», թիւ 11–12, Անթիլիաս–Լիբանան, 1988, էջ 581–583։ Տե՛ս նաեւ՝ Ք. Պետրոսյան, Հայրենիք–Սփյուռք հարաբերությունները 1988–2001 թթ., Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, էջ 173–174։ Տե՛ս նաեւ՝ Վազգեն Ա. նամականի (110 վավերագիր Վազգեն Ա. արխիվից), կազմ.՝ Ս. Սուքիասյան, Երեւան, «Նարիրի», 2018, էջ 124–127։ Տե՛ս նաեւ՝ Ք. Պետրոսյան, «Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական աթոռների եւ սփյուռքյան թեմերի աջակցությունը 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետեւանքները վերացնելու գործում», Հայոց Եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում, էջ 216–218։

մեծաքանակ մարդասիրական օգնություն՝ մթերք, բժշկական սարքավորումներ, դեղորայք, հագուստ, որոնց ստացման եւ բաշխման կենտրոններից մեկը դարձավ Հայ Առաքելական Եկեղեցին։ Պետք է փաստել, որ երկրաշարժին հաջորդած առաջին ամիսներին Մայր Աթոռի հասցեին ողջ աշխարհի եկեղեցիներից, եկեղեցական եւ կրոնական կազմակերպություններից, հասարակական կազմակերպություններից, Հայկական սփյուռքի կողմից ուղարկվեց նաեւ դրամական մեծ օգնություն[12]։

Մայր Աթոռի միջնորդությամբ Սփյուռքի հայ եկեղեցական ու ազգային տարբեր կազմակերպություններ ծրագրեր մշակեցին նաեւ աղետյալ շրջանների վերաշինության գործին մասնակցություն բերելու նպատակով։

Հանգանակված գումարները համակարգելու նպատակով Եկեղեցու Ժնեւի (Շվեյցարիա) դրամատանը Մայր Աթոռը հատուկ հաշիվ բացեց «աղետյալների ֆոնդ» անվամբ, որի գումարներով նախատեսվում էր իրագործել աղետից տուժած Ստեփանավան քաղաքի վերականգնման ծրագիրը[13]։ Եկեղեցու հասցեով ստացված դրամական օգնության վերաբերյալ Մայր Աթոռը պարբերաբար ներկայացնում էր հաշվետվություններ, որոնք հրապարակվում էին «Էջմիածին» ամսագրում։ Փաստորեն Հայոց Եկեղեցին գործում էր բաց եւ թափանցիկ, որը չտեսնված երեւույթ էր խորհրդային իրականության մեջ։

Հարկ է նշել, որ Եկեղեցու խողովակներով ուղարկված դրամական օգնությունն ամբողջությամբ ուղղվեց աղետի գոտու կարիքներին, մինչդեռ խորհրդային պետական ֆինանսական կառույցների հաշվին փոխանցված գումարների հիմնական մասն այդ ուղղությամբ չկիրառվեց։ Խորհրդային «Վնեշտորգբանկը» եւ «Սբերբանկը» ոչ միայն փոշիացրին տարբեր երկրներից աղետյալ տարածաշրջանի կարիքների համար փոխանցած հսկայական արտարժութային միջոցները, այլեւ ԽՍՀՄ փլուզումից հետո փաստորեն յուրացրին դրանք[14]։

---

[12] Մանրամասն տե՛ս՝ Ք. Պետրոսյան, «Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական աթոռների եւ սփյուռքյան թեմերի աջակցությունը 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետեւանքները վերացնելու գործում», Հայոց Եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում, էջ 205–226։

[13] Տե՛ս Ամենայն Հայոց Վազգեն Ա. Հայրապետի այցը Միացյալ Նահանգներ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խոսքը՝ արտասանված Ս. Վարդան Մայր տաճարում ժողովի բացման առթիվ (6 փետրվարի 1989 թ.), «Էջմիածին» ամսագիր, թիվ 2–3, 1989, էջ 42։

[14] Տե՛ս Թ. Աղանյան, Երկրաշարժը վերապրածների սոցիալ-մշակութային ադապտացումը, էջ 43։ Տե՛ս նաեւ՝ Т. Аганян, Вклад Армянской Апостольской церкви в деле социально-куль-

Երկրաշարժին հաջորդած տարիներին եւս երկու կաթողիկոսները հետեւողականորեն շարունակում էին իրենց հայրենավեր գործը՝ հանդես գալով համատեղ հանձնառություններով։ 1989 թ. ապրիլի 21–29-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ի հրավերով պաշտոնական այցով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գտնվող Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ.-ն[15] ապրիլի 25-ին այցելեց աղետի գոտի, եղավ Գյումրիում, Սպիտակում, Ստեփանավանում, Վանաձորում եւ վերականգնման աշխատանքներին սատարելու նպատակով Մայր Աթոռին նվիրաբերեց հարյուր հազար դոլար[16]։

Երկու կաթողիկոսները 1989 թ. ապրիլի 29-ին ընդունեցին համատեղ հայտարարություն, որում անդրադառնալով 1988 թ. աղետալի երկրաշարժին՝ մեկ անգամ եւս կոչ էին ուղղում Սփյուռքի եկեղեցիներին եւ բոլոր հայկական կազմակերպություններին շուտափույթ կերպով իրենց լիազոր ներկայացուցիչներին ուղարկել Հայաստան վերաշինության պատասխանատու պատկան մարմնի հետ համախորհուրդ ճշտելու իրենց օգնության առարկան եւ առաջիկա ամիսներին այն ի կատար ածելու նպատակով[17]։

1991 թ. հունիսի 8–22-ը հերթական անգամ լինելով հայրենիքում՝ Գարեգին Բ.-ն հունիսի 13-ին երրորդ անգամ այցելեց աղետի գոտի, եղավ Գյումրիում, Սպիտակում եւ հերթական անգամ ճշտեց եւ համաձայնեցրեց իրենց անելիքները հայրենիքի վերաշինության գործում։

турной адаптации населения Зоны бедствия, *էջ 21։*

[15] *Տե՛ս Դիւան Մայր Աթոռի (Ս. Էջմիածին, 8 մայիս, 1989 թ.), Հաղորդագրութիւն, «Էջմիածին» ամսագիր, թիվ 4–6, 1989, էջ 8։ Տե՛ս նաեւ՝ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Էջմիածին» ամսագիր, թիվ 4–6, 1989, էջ 12–29։ Տե՛ս նաեւ՝* ԲԱԲԳԷՆ ԱԲՂ. ՉԱՐԵԱՆ, *Գարեգին Բ. Կաթողիկոսի այցելութիւնը ի Ս. Էջմիածին եւ ի Հայաստան (21–29 ապրիլ, 1989), «Հասկ», թիւ 4–5, Անթիլիաս–Լիբանան, 1989, էջ 177–285։*

[16] *Տե՛ս Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ. Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Էջմիածին», թիվ 4–6, 1989, էջ 24–25։ Տե՛ս նաեւ՝* ԲԱԲԳԷՆ ԱԲՂ. ՉԱՐԵԱՆ, *Գարեգին Բ. Կաթողիկոսի այցելութիւնը ի Ս. Էջմիածին եւ ի Հայաստան (21–29 ապրիլ, 1989), «Հասկ», թիւ 4–5, Անթիլիաս–Լիբանան, 1989, էջ 266, 272։ Տե՛ս նաեւ՝* Ք. ՊԵՏՐՈՍՅԱՆ, *«Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական աթոռների եւ սփյուռքյան թեմերի աջակցությունը 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետեւանքները վերացնելու գործում», Հայոց Եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում, էջ 219։*

[17] *ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 102, թ. 34–37։ Տե՛ս նաեւ՝ Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ. Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Էջմիածին» ամսագիր, թիվ 4–6, 1989, էջ 28։ Տե՛ս նաեւ՝* ԲԱԲԳԷՆ ԱԲՂ. ՉԱՐԵԱՆ, *Գարեգին Բ. Կաթողիկոսի այցելութիւնը ի Ս. Էջմիածին եւ ի Հայաստան (21–29 ապրիլ, 1989), «Հասկ», թիւ 4–5, Անթիլիաս–Լիբանան, 1989, էջ 273։ Տե՛ս նաեւ՝* Ք. ՊԵՏՐՈՍՅԱՆ, *«Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական աթոռների եւ սփյուռքյան թեմերի աջակցությունը 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետեւանքները վերացնելու գործում», Հայոց Եկեղեցու դերը պետականության բացակայության պայմաններում, էջ 219։*

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՄԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մեծ է Հայ Եկեղեցու դերը հատկապես աղետի գոտու բնակչության նոր իրողություններին ընկերային-մշակութային հարմարման գործում, քանի որ աղետից հետո բնակչությունը բախվեց ոչ միայն նյութական, այլեւ ծանր ընկերային, հոգեբանական եւ մշակութային խնդիրների[18]։

Խորհրդային Միության փլուզումը հանգեցրեց խորհրդային պետական եւ տնտեսական կառույցների փլուզմանը եւ աղետի գոտին երկու տարում վերականգնելու ԽՍՀՄ իշխանությունների խոստումները չիրագործվեցին։ Աղետի գոտու բնակչությունը հայտնվեց ընկերային-հոգեբանական խոր ճգնաժամի մեջ, որին նպաստեց նաեւ այն հանգամանքը, որ Խորհրդային Միության հանրապետություններից եւ արտասահմանից ուղարկված ահռելի օգնությունը պետական օղակներում յուրացվում էր՝ չհասնելով հասցեատերերին։ Բնակչության ընկերային խնդիրների սրմանը նպաստեց նաեւ այն, որ չվերականգնվեցին աղետի գոտու փլուզված տնտեսական ենթակառուցվածքները։ Նման պայմաններում Հայոց Եկեղեցին իր հնարավորությունների սահմաններում ստանձնեց աղետի գոտու բնակչության բոլոր հանրային-տարիքային խմբերին ընկերային-հոգեբանական օգնություն ցուցաբերելու ծանր գործը, որում Եկեղեցուն հսկայական օգնություն ցուցաբերեց հայկական Մփյուռքը։

Երկրաշարժի առաջին օրերից գիտակցելով աղետի գոտու բնակչության աջակցության հարցում ընկերային-հոգեբանական գործոնի դերն ու նշանակությունը՝ Հայոց Եկեղեցին որոշակի քայլեր ձեռնարկեց այդ ուղղությամբ։ Ինչպես նշել ենք երկրաշարժից չորս օր անց՝ դեկտեմբերի 11-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ն այցելեց աղետի գոտու ավերված եւ փլատակների վերածված բնակելի թաղամասերը եւ աղետից տուժած բնակչությանն ուղղված Վեհափառի խոսքերը հսկայական հոգեբանական ազդեցություն ունեցան հավատացյալ ժողովրդի վրա[19]։

Տուժածներին մխիթարելու եւ աջակցելու հերթական քայլն էր 1989 թ. հունվարի 26-ին Վեհափառ Հայրապետի այցը երկրաշարժից տուժած շրջաններ (Սպիտակ, Վանաձոր, Ստեփանավան), որի ընթացքում Նորին

---

[18] *Մանրամասն տե՛ս՝* Т. Аганян, Вклад Армянской Апостольской церкви в деле социально-культурной адаптации населения Зоны бедствия, *էջ 19–26։*

[19] *Նույն տեղում, էջ 23։*

Սրբությանն ուղեկցում էին Իրաքի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ավագ եպս. Ասատուրյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը, Մայր Աթոռի միաբան Տ. Աբրահամ աբեղա Մկրտչյանը՝ որպես գավազանակիր, իրաքահայ ազգային-հասարակական գործիչ Հասրաթ Միքայելյանը, «Մարմարա» թերթի խմբագիր Գեւորգ Հակոբյանը եւ սփյուռքահայ հասարակական մի շարք այլ գործիչներ[20]։ Կաթողիկոսը ներկայացնում էր փետրվարին ԱՄՆ՝ Նյու Յորք մեկնելու իր ծրագիրը, որի նպատակն էր ամերիկահայության ուժերի կազմակերպումն ու մեկտեղումը Ստեփանավան քաղաքի վերաշինության համար։ Ամենուր Վեհափառ Հայրապետը մխիթարում էր սգակիր ժողովրդին, վշտակցությունն ու օրհնությունն էր բերում, նաեւ իր քաջալերանքը այդ ծանր օրերը քաջությամբ անցկացնելու համար, մատնանշում էր աղետյալներին ամեն կերպ օգնելու համայն աշխարհի, այդ թվում նաեւ համայն հայության միասնությունն ու պատրաստակամությունը եւ հորդորում էր հույսով ու հավատով լցվել ապագայի հանդեպ։

Աղետից ուղիղ մեկ տարի անց՝ 1989 թ. դեկտեմբերի 10-ին երկրաշարժի տարելիցին այցելելով աղետի գոտի՝ Գյումրի եւ Սպիտակ, Վազգեն Ա.-ն բնակչության հետ հանդիպումների, ինչպես նաեւ իր քարոզների ընթացքում հերթական անգամ կարեւորում էր Հայոց Եկեղեցու դերը աղետի գոտու վերականգնման, երկրաշարժից տուժած բնակչության ընկերային-հոգեբանական եւ մշակութային վերականգնման գործում[21]։ Կաթողիկոսը կարեւորում էր հասարակության հոգեւոր վերազարթոնքը, եկեղեցաշինական ծրագրերի կյանքի կոչումը հատկապես աղետի գոտում, այդ ուղղությամբ նախաձեռնված քայլերը, առաջիկա տարիներին նոր եկեղեցիների կառուցումն ու վերակառուցումը, մասնավորապես Գյումրու Յոթ վերք Աստվածամոր Մայր եկեղեցու վերաշինությունը, երկրաշարժից խոնարհված Գյումրու Ս. Ամենափրկիչ եկեղեցու վերակառուցումը, Ստեփանավանի ու Վանաձորի եկեղեցիների վերանորոգումը, բոլոր աղետյալ քաղաքների ու գյուղերի զոհվածների հիշատակը հավերժացնելու համար Սպիտակում նոր հուշարձան-եկեղեցու կառուցումը։ Վեհափառը համոզմունք էր հայտնում, որ աղետի գոտին կվերականգնվի

---

[20] *Տե՛ս* Աբրահամ աբեղ. Մկրտչյան, *Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայաստանի երկրաշարժից տուժած շրջաններ, «Էջմիածին» ամսագիր, թիվ 1, Էջմիածին, 1989, էջ 19։*

[21] *Տե՛ս* Առկայծող հույսի ծիլերը (Ամենայն Հայոց Հայրապետը Լենինականում եւ Սպիտակում՝ երկրաշարժի տարելիցին), *«Էջմիածին» ամսագիր, թիվ 11–12, 1989, էջ 26–33։*

հայրենի իշխանությունների, արտասահմանյան կազմակերպությունների օժանդակությունների, ինչպես նաեւ Սփյուռքի հայ եղբայրների եւ քույրերի շարունակական օգնությունների շնորհիվ։

«...Հայ ազգը աշխարհի ամենահին եւ ամենաօժտված ազգերից մեկն է։ Ճիշտ է, մեր հայրենիքը այսօր իր աշխարհագրական տարածքով փոքր է, այսօրվա Խորհրդային Հայաստանը իր սահմաններով հազիվ մեկ ութերորդ մասն է բուն Հայաստանի, պատմական Մայր Հայաստանի։ Բայց ոչինչ, մենք այստեղ պիտի ապրենք, պիտի աճենք, պիտի զարգանանք, պիտի ծաղկենք, ցույց տալու աշխարհին, որ հայ ազգը մահանալու ազգ չէ՛, հայ ազգը կենդանի՛ ազգ է, հայ ազգը շինարա՛ր ազգ է, հայ ազգը ստեղծարա՛ր ազգ է։ Աստուծո ստեղծարար ոգին բաշխված է մեր ժողովուրդին երեք ու ավելի հազար տարիներից ի վեր»[22],— Սպիտակի Ս. Հարություն մատուռում 1989 թ. դեկտեմբերի 10-ի հավատացյալներին ուղղված իր խոսքում նշեց Վազգեն Ա.-ն։

Իր ուժերով եւ արտասահմանից ստացվող միջոցներով Մայր Աթոռը աղետի գոտու քաղաքներում ստեղծեց հոգեբանական աջակցության կենտրոններ, որոնցում արտասահմանյան եւ հայրենի մասնագետները հոգեբանական աջակցություն էին ցուցաբերում հետցնցումային խնդիրներով տառապող մարդկանց[23]։ Հատուկ ուշադրության կենտրոնում էին երեխաներին կորցրած ծնողները եւ աղետի հետեւանքով ծնողազուրկ երեխաները։ Հոգեբանների եւ հոգեւոր հայրերի հետեւողական աշխատանքի շնորհիվ իրենց երեխաներին կորցրած բազմաթիվ ընտանիքներ նոր երեխաներ ունեցան[24]։

Հայ Առաքելական Եկեղեցու Սփյուռքում գործող թեմերը եւս ակտիվ աշխատանք էին տանում՝ իրենց հավատացյալներին կոչ անելով աջակցություն ցուցաբերել աղետի հետեւանքով ծանր ընկերային-տնտեսական ճգնաժամի մեջ հայտնված հայրենակիցներին։ Հայկական սփյուռքը հսկայական օգնություն սկսեց ցուցաբերել աղետից տուժած հայրենիքին՝ ուղարկելով նյութական օգնություն, տոննաներով սնունդ, հագուստ, դեղորայք, սարքավորումներ եւ այլն։ Հայկական սփյուռքի միջոցներով Սպիտակում, Գյումրիում, Վանաձորում կառուցվեցին բազմաթիվ կրթա-

---

[22] *Նույն տեղում, էջ 33։*

[23] *Տե՛ս* Т. Аганян, Вклад Армянской Апостольской церкви в деле социально-культурной адаптации населения Зоны бедствия, *էջ 23։*

[24] *Նույն տեղում։*

կան, առողջապահական, մշակութային հաստատություններ։ Այդ բոլոր բարեգործական ձեռնարկներում միջնորդի եւ ոգեշնչողի դերում հիմնականում հանդես էր գալիս Հայոց Եկեղեցին։ Դրվատելի էր Հայոց Եկեղեցու դերը հատկապես աղետից ծնողազուրկ դարձած երեխաների ընկերային-հոգեբանական եւ մշակութային հարմարման-ընտելացման գործում։ Երկրաշարժին հաջորդած տարում՝ 1989 թ., մի շարք արտասահմանյան թեմեր կազմակերպեցին ծնողազուրկ երեխաների հանգիստը ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում, Հունաստանում, Բուլղարիայում եւ այլն[25]։ Բացի այդ, սկզբում Շիրակի, այնուհետեւ Գուգարքի թեմերում ստեղծվեցին հոգեւորականներից եւ աշխարհականներից բաղկացած հոգաբարձուների խորհուրդներ, որոնք բաշխում էին ծնողազուրկ երեխաների համար Սփյուռքից ստացված օգնությունը։ Այդ խորհուրդները գործում էին մինչեւ ծնողազուրկ երեխաների չափահաս դառնալը։ Ծնողազուրկ երեխաներին ուղղվող օգնությունը չէր սահմանափակվում միայն նյութական աջակցությամբ, այլ ներառում էր նաեւ հոգեւոր-մշակութային աջակցություն։

Շարունակությունը՝ հաջորդիվ

[25] *Նույն տեղում, էջ 24։*